ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Փանոսյանի 30.06.2017 թվականի (մուտք թիվ 1447-17) դիմումի հիման վրա փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր թիվ 970) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. **<u>Դիմումի համառոտ բովանդակությունը և դիմողի պահանջը.</u>**

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Փանոսյանը (**այսուհետ՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**), հայտնել է, որ փաստաբան Արայիկ Պապիկյանը զանգվածային լրատվամիջոցով կատարել է հրապարակում, որով դուրս է եկել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված փաստաբանական գործունեության շրջանակներից: Մասնավորապես, նշվել է, որ փաստաբանը փաստաբանական գործունեությանը չվերաբերող, վստահորդին իրավաբանական օգնություն տրամադրելուն որևէ կերպ չառնչվող հարցերով իր հայացքներն է փոխանցել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, ավելին՝ անպարկեշտ ձևակերպումներով գնահատականներ է տվել պետական իշխանության մարմիններին, իրավապահ մարմիններին ու դրանց գործունեությանը, իրեն վերապահելով քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորություններ՝ քրեաիրավական որակման է ենթարկել ոստիկանության ծառայողների գործողությունները, որոշակի տեղեկություններ է հայտնել իր պաշտպանյալից սպասվող հակահարվածի մասին:

Դիմումում նշվել է նաև, որ փաստաբանի կողմից նույն բովանդակությամբ գրառում է կատարվել նաև նրա ֆեյսբուքյան էջում: Ընդ որում, փաստաբանը հանդես է եկել իր անունից, վերջինիս դատողությունները ձևակերպված են ոչ թե որպես անձնական կարծիք կամ գնահատական, այլ որպես բացարձակ

17 հուլիսի 2017թ.
թիվ 196-Ա/ԿԳ-17049

ճշմարտություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը Դիմողը խնդրել է քննարկել փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Դիմումին կից ներկայացված՝ www.mamul.am կայքում Արայիկ Պապիկյանի անունից կատարված հրապարակումն ունի հետևյալ բովանդակությունը՝

««Սասնա ծռեր» խմբի անդամ Արայիկ Խանդոյանի պաշտպան Արայիկ Պապիկյանը հանդես է եկել հայտարարությամբ՝ Արայիկ Խանդոյանի Խոշտանգման մասին. «2017 թ. հունիսի 28-ին քաղբանտարկյալ Արայիկ Խանդոյանը Հայաստանի Հանրապետության ժողովրդի իշխանությունը զավթած վարչախմբի շահերը սպասարկող ոստիկանության կողմից ենթարկվել է խոշտանգման և ծեծի: Նրան հասցվել են բազմաթիվ մարմնական վնասվածքներ:

Արայիկ Խանդոյանի նկատմամբ անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փորձերը վերջին 11 ամիսների ընթացքում կրել են շարունակական բնույթ, իսկ վերջին օրերին դրանք կրել են սանձարձակ բնույթ:

Երբ 2016թ. օգոստոսի 1-ին Հայաստանի նախագահի պաշտոնը ժողովրդի կամքին հակառակ զբաղեցնող անձը հայտարարեց, որ «անձնական վրեժխնդրության բոլոր փորձերը կասեցվելու են օրենքի ուժով», մոռացել էր նշել, որ ինքն ու իր անձնական շահերը սպասարկող կամակատարներն օրենքից դուրս են, իսկ օրենքից դուրս գտնվող անձը ղեկավարվում է բացառապես անձնական վրեժխնդրությամբ:

Արայիկ Խանդոյանն այդ վրեժխնդրության ֆիզիկական զոհն է: Ռեժիմը չի հասկանում, որ Ծուռ Արայիկի տեսակը չգիտի՝ ինչ է ֆիզիկական կամ մարմնական ցավը, ռեժիմը չի հասկանում, որ նրան բանտարկելը նոր ուժ է տվել նրա անկոտրում ոգուն:

Արայիկ Խանդոյանին մարտահրավեր նետել են մարտի դաշտում՝ թուրքն ու ազերին, նա ընդունել է դա և տվել մահացու պատասխան:

Միայնակ Գայլը ընդունում է նաև ազգադավ ռեժիմի մարտահրավերը. Հայտարարում ենք՝ պատասխանը լինելու է նույնը՝ Արայիկն այլ կերպ չի կարող, կստանաք թուրքին ու ազերուն համարժեք պատասխան: Դա միակ և արդարացի պատասխանն է, որն անհրաժեշտ է Հայաստանին ու հայ ժողովրդին, և այդ պատասխանը շատ չի ուշանա:

Հակահարվածը կլինի արդարացի, ռեժիմի համար խիստ ցավալի, քանզի բանդան ոգի չունի և բարոյական օրենքներից զուրկ է:

Հայտարարում ենք նաև, որ վրեժխնդրություն լինելու է, քանզի որևէ բռնակալ ու նրան սպասարկող բանդա չի խուսափել ժողովրդական վրեժխնդրությունից:

Մարտահրավերն ընդունված է՛

«Ով քնած է՝ արթուն կացեք,
Ով արթուն է՝ ձիեր թամբեք,
Ով թամբել է զենք կապեցեք,
ով կապել է՝ ելեք, հեծեք,
Հետո չասեք թե մենք քնած
ԳԱՅԼԸ գող-գող եկավ-գնաց ...»:»:

2. <u>Փաստաբան Արայիկ Պապիկյանի համառոտ դիրքորոշումը</u>.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Արայիկ Պապիկյանին առաջարկվել է գրավոր բացատրություն ներկայացնել դիմումի վերաբերյալ:

Արայիկ Պապիկյանի կողմից 11.07.2017 թվականին ներկայացվել է պատասխան, որով փաստաբանը նշել է, որ չի ցանկանում և չի կարող բացատրություն տալ, քանի որ ընդամենը առկա է անվերնագիր գրություն, որի դիմում լինելու փաստը կասկածելի է, միաժամանակ նշված գրությունն ըստ փաստաբանի՝ կազմված է անհասկանալի մտքերից ու արտահայտություններից:

3. <u>Պալատի եզրահանգումը և որոշումը</u>.

Գտնում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազության դիմումի հիման վրա փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***<u>փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են</u>***՝ *պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև <u>այլ անձանց դիմումները (բողոքները),</u> ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Դիմումի ուսումնասիրության արդյունքում Պալատը գալիս է այն եզրահանգման, որ դիմումով նշված փաստերի հաստատման դեպքում փաստաբան Արայիկ Պապիկյանի արարքում առերևույթ կարող է առկա լինել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.2.2 և 2.2.3 ենթակետերի խախտման հատկանիշներ:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և*

իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:

Փաստաբանը գործելով Օրենքի և Կանոնագրքի պահանջներին համապատասխան, ամբողջությամբ պաշտպանված է արտաքին ճնշումներից և կարող է համարձակորեն պաշտպանել իր վստահորդի շահերը: Հետևաբար, փաստաբանի կողմից Օրենքի և Կանոնագրքի պահանջները չխախտելու հարցում առաջին շահառուն վստահորդն է:

Որպես փաստաբանի գործունեության երաշխիքներ հատկանշական են Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում նշված հետևյալ դրույթները՝

- ***<u>փաստաբանը չի կարող</u>*** *հետապնդվել,* ***<u>պատասխանատվության</u>*** *և բերման* ***<u>ենթարկվել,</u>*** *ձերբակալվել, կալանավորվել կամ ենթարկվել իրավունքների այլ սահմանափակման* ***<u>իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ</u>****, ներառյալ՝ վարույթն իրականացնող և այլ մարմիններում* ***<u>հայտնած կարծիքի կամ դիրքորոշման համար</u>****.*

- *փաստաբանը* ***<u>չպետք է նույնացվի իր վստահորդի հետ՝</u>*** *ելնելով փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարումից:*

Արդարադատության իրականացման գործում փաստաբանի՝ որպես հանրության և դատարանների միջև միջնորդի կոչումը և դերը, վերջինիս պարտավորեցնում է ՀՀ օրենսդրությամբ նախանշված շրջանակներում բարեխիղճ և որակյալ կատարել իր մասնագիտական պարտականությունները: Միաժամանակ, փաստաբանը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, ինչը կարող է նախադրյալներ ստեղծել **փաստաբանին իր վստահորդի հետ նույնացնելուն**: Այս նորմի խախտումը հղի է նաև աղետալի հետևանքներով, երբ հակառակորդ կողմը փաստաբանին նույնացնում է նրա վստահորդի հետ և փորձում է փաստաբանի ակտիվ պաշտպանական գործունեության համար վրեժ լուծել նրանից: Փաստաբաններին իրենց վստահորդների հետ նույնացնելու պայմաններում, փաստաբանները կարող են իրենց անպաշտպան զգալ հակառակորդ կողմի անօրինական գործողությունների հանդեպ և կաշկանդվել՝ իրենց վստահորդների շահերն արդյունավետ պաշտպանելու հարցում:

Նշված նորմը կխախտվի և նույն վտանգավոր հետևանքները կարող են լինել, եթե փաստաբանն ինքն է իրեն նույնացնում իր վստահորդի հետ:

Հետևաբար, փաստաբանի կողմից Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի անտեսումը կարող է հանգեցնել փաստաբանության հեղինակության և փաստաբանի մասնագիտության նկատմամբ հասարակության վստահության թուլացմանը:

Այս համատեքստում, Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պատասխանատվության չկանչվելու երաշխիքը գործում է այն դեպքում, երբ փաստաբանը գործում է իր մասնագիտական պարտականությունների և իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի*

առաջարկների հանդեպ մատչելիություն):

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ [1]:*

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ <u>փաստաբանը հատուկ դեր է ստանձնում</u>: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է, որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը :*

Տվյալ դեպքում, Դիմողը նշել է, որ փաստաբան Արայիկ Պապիկյանը զանգվածային լրատվամիջոցով կատարել է հրապարակում, որով դուրս է եկել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված փաստաբանական գործունեության շրջանակներից: Մասնավորապես, նշվել է, որ փաստաբանը փաստաբանական գործունեությանը չվերաբերող, վստահորդին

---

[1] Տե՛ս Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

իրավաբանական օգնություն տրամադրելուն որևէ կերպ չառնչվող հարցերով իր հայացքներն է փոխանցել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին: Ավելին՝ անպարկեշտ ձևակերպումներով գնահատականներ է տվել պետական իշխանության մարմիններին, իրավապահ մարմիններին ու դրանց գործունեությանը, իրեն վերապահելով քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորություններ՝ քրեաիրավական որակման է ենթարկել ոստիկանության ծառայողների գործողությունները, որոշակի տեղեկություններ է հայտնել իր պաշտպանյալից սպասվող հակահարվածի մասին:

Դիմումին կից ներկայացված՝ www.mamul.am կայքում Արայիկ Պապիկյանի անունից կատարված հրապարակման մեջ, բացի իրավական քննադատական խոսքերից[2] առկա են նաև արտահայտություններ, որոնք փաստաբանի կողմից կատարված լինելը հաստատվելու դեպքում կարող են հակասել վերոհիշյալ կանոններին: Մասնավորապես նշվել է՝ «*Հակահարվածը կլինի արդարացի, ռեժիմի համար խիստ ցավալի, քանզի բանդան ոգի չունի և բարոյական օրենքներից զուրկ է: Հայտարարում ենք նաև, որ վրեժխնդրություն լինելու է, քանզի որևէ բռնակալ ու նրան սպասարկող բանդա չի խուսափել ժողովրդական վրեժխնդրությունից:*»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ Դիմողի վկայակոչված փաստերը, այն է՝ փաստաբան Արայիկ Պապիկյանի կողմից իր մասնագիտական պարտականությունների շրջանակներից դուրս այնպիսի հայտարարություններ կատարելը, որը կարող է հանգեցնել վերջինիս իր վստահորդի հետ նույնացմանը, ինչպես նաև կասկածի տակ դնել փաստաբանի մասնագիտության հեղինակությունը, հաստատվելու դեպքում, փաստաբան Արայիկ Պապիկյանի արարքում առերևույթ առկա կլինեն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի խախտման հատկանիշներ:

Ինչ վերաբերում է փաստաբան Արայիկ Պապիկյանի կողմից 11.07.2017 թվականին ներկայացված պատասխանում նշված այն դիրքորոշմանը, որ չի ցանկանում և չի կարող բացատրություն տալ, քանի որ ընդամենը առկա է անվերնագիր գրություն, որի դիմում լինելու փաստը կասկածելի է, ապա գտնում եմ, որ այդ փաստարկը հիմնավոր չէ, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը կարգապահական վարույթ հարուցելու առիթ է համարում դիմումը կամ բողոքը: Պալատին ուղղված գրությունը, որը պարունակում է փաստաբանի վարքագծի վերաբերյալ տեղեկություն, ամբողջությամբ ներառում է նշված նորմով սահմանված «առիթ» հասկացության մեջ: Որևէ օրենքով սահմանված չէ դիմումների վերնագրերը նշելու պարտականությունը, այդ թվում՝ վերնագիրը չնշելու իրավական հետևանքները:

Միաժամանակ, Պալատը հարկ է համարում արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի

---

[2] *Օրինակ հնչեցվել է հետևյալ քննադատական միտքը՝ «Արայիկ Խանդոյանի նկատմամբ անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փորձերը վերջին 11 ամիսների ընթացքում կրել են շարունակական բնույթ, իսկ վերջին օրերին դրանք կրել են սանձարձակ բնույթ:»:*

նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Հաշվի առնելով, որ Դիմողը հրապարակել է իր դիմումը, գտնում եմ, որ սույն որոշումը ենթակա է հրապարակման Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 4-րդ մասի, 39.3 հոդվածի, ինչպես նաև Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 10-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***Փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր թիվ 970) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-17049)*:**

2. ***Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Փանոսյանին***:

3. ***Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝***

- ***կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.***
- ***սույն որոշման մեկական օրինակ ուղարկել դիմողին և փաստաբան Արայիկ Պապիկյանին՝ պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.[2] հոդվածով նախատեսված իրավունքները.***
- ***ապահովել սույն որոշման հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

17 հուլիսի 2017թ.
թիվ 196-Ա/ԿԳ-17049
ք. Երևան